ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. սեպտեմբերի 6-ից 8-ը Բանգկոկ (Թաիլանդի Թագավորություն)՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ պարոն Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Էրիկ Գրիգորյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Բանգկոկ (Թաիլանդի Թագավորություն)

   2017թ. սեպտեմբերի 6-ից 8-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   ՄԱԿ-ի Ասիական և Խաղաղօվկիանոսյան տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողով և ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր:

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Մասնակցություն Ասիական և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի առաջին նախարարական վեհաժողովի բարձրաստիճան հատվածի հանդիպմանը:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի բնապահպանական հարցերին, քննարվել են նախարարական 6-րդ կոնֆերանսի կատարողականները: Նախարարական մակարդակով մեկ հարկի տակ էին միավորվել ՄԱԿ-ի երկու բնապահպանական հարթակները՝ կենտրոնանալով Ասիական և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման և աղտոտման նվազեցման միջև առկա կապի վրա: Մասնավորապես, բարձրաստիճան հատվածի հանդիպման ընթացքում Կողմերը քննարկեցին Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի Շրջակա միջավայր և Զարգացում վեցերորդ նախարարական համաժողովի արդյունքների իրականացման ընթացքը և նախանշեցին առաջիկա տարիների գործունեության հիմնական ուղղությունները: Վերանայվեցին նաև 2016թ. ՄԱԿ-ի բնապահպանական

Ասամբլեայի կողմից ընդունած տարածաշրջանի համար բանաձևերի իրականացման արդյունքները:

Բարձրաստիճան հատվածի հանդիպման ընթացքում հանդես եմ եկել ելույթով՝ ողջունելով Նախարարական հայտարարության նախագիծը, մասնավորապես մատնանշելով տարածաշրջանային համագործակցության կարևորությունը՝ ընդգծելով, որ բնապահպանական խնդիրները պետք է լուծվեն տնտեսական և սոցիալական հարցերին զուգահեռ: Ելույթի մեջ անդրադարձել եմ աղքատության՝ որպես բնապահպանական խնդիրներ առաջացնող կարևոր փաստի և դրա կարևորությանը:

Ներկայացրել եմ GCF կողմից ֆինանսավորվող նոր նախագծը, որը հանդիսանում է համաշխարհային մակարդակով 10 ստորագրված ծրագրերից մեկը և առաջինը Եվրասիական տարածաշրջանում: Նաև նշել եմ, որ ի տարբերություն անցյալի, ներկայումս, թե տնտեսական և թե սոցիալական տեսանկյունից շահավետ է ներդրումներ անել բնապահպանության մեջ:

7. <u>ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>

Համաժողովի ընթացքում հանդիպումներ եմ ունեցել Սինգապուրի բնապահպանության նախարարի, Իրանի, Ճապոնիայի պատվիրակության ղեկավարի և այլոց հետ:

ՀՀ բնապահպանության

նախարարի առաջին տեղակալ՝

Է.Գրիգորյան